

Արձանագրություն N10

Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

26.05.2015թ. նիստի

Օրակարգ 1 2 34567890

1. 2014-2015 ուս. տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվությունները /Պարոնյան Շ., Առաքելյան Ա./
2. ՈւԳԸ-ի նախագահի հաշվետվությունը:
3. 2014-2015 ուս. տարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում:
4. Ընթացիկ հարցեր:
Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 26-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ս. Վարդանյանի Պարույր Սևակի անգլերեն թարգմանությունը ֆակուլտետի կողմից տպագրության չերաշխավորվելու հարցի քննությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ելույթ ունեցողները /Ս. Գասպարյան, Զ. Հարությունյան, Շ. Պարոնյան/ նշեցին, որ աշխատանքն իրոք արժեքավոր է, բայց առանց լեզվակրի խմբագրման այն չի կարող երաշխավորվել տպագրության:

ԱՌԱԶԱՐԿԵՑԻՆ՝ Դիմել ՀՀ Մշակույթի և Սփյուռքի նախարարություններին ֆինանսավորելու հեղինակավոր լեզվակիր բանաստեղծի՝ նշված թարգմանության խմբագրման կարևորագույն աշխատանքը կատարելու համար:

2. ԼՍԵՑԻՆ՝ Միջմշակութային հաղորդակցության ամբիոնի վարիչ Շ. Պարոնյանը զեկուցեց, որ հաշվետու ժամանակաշրջանում բարելավվել է ուսումնական գործընթացը: Վերանայվել և թարմացվել են առարկայական ծրագրերը, ստեղծվել են նոր դասագրքեր: Պատրաստ է նաև 2-րդ կուրսի լեքսիկայի դասագիրքը և մի շարք այլ դասագրքեր և ձեռնարկներ: Ամբիոնը մայիսի սկզբին անցկացրել է իր հերթական միջազգային գիտաժողովը, որի գործնական սեմինարի ձևաչափը շատ գովելի է: Պարբերաբար անցկացվել են գործնական սեմինարներ ամերիկացի մասնագետների մասնակցությամբ դասախոսների և ուսանողների համար: Ամբիոնի դասախոսները ակտիվորեն մասնակցում են Երևանում գործող դասախոսների համար նախատեսված միջազգային դասընթացներին: Ամբիոնի ցավոտ խնդիրը արտադրական պրակտիկայի կազմակերպման հետ կապված դժվարությունների հաղթահարումն է: Այս տարի մոտ վաթսույն ուսանողի ուղարկվել են մասնագիտության հետ կապված նոր հաստատություններ: Կազմակերպվել են նաև արտալսարանային շատ միջոցառումներ: Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ա. Առաքելյանը զեկուցեց, որ ամբիոնի աշխատանքները հիմնականում ընթացել են հաջող, հրատարակվել են մենագրություններ և ձեռնարկներ: Ավարտական աշխատանքների հետ կապված ամբիոնի դժգոհությունը կապված է գրագողությունների հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միջմշակութային հաղորդակցության ամբիոնի և Արտասահմանյան գրականության ամբիոնի հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքները գնահատել լավ:

3. ԼՍԵՑԻՆ՝

ՈՒԳԸ նախագահ Նորայր Միրաքյանը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է 1 գիտաժողով, 3 դասընթաց, 18 սեմինար, Վիքին սիրում է գիտությունը երկօրյա 7 քննարկում Աղվերանում, 3 մրցույթ, 4 գիտաճանաչողական այց, 4 ինտելլեկտուալ խաղ-բանավեճ, 4 ֆիլմի ցուցադրություն, 18 գիտաժողովի մասնակցություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում ՈՒԳԸ-ի կատարած աշխատանքը գնահատվեց լավ:

3. ԼՍԵՑԻՆ՝

Ամփոփելով 2014-2015 ուս. տարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքները՝ ղեկանը նշեց, որ ընդհանուր առմամբ ուսանողների գնահատականները խրախուսիչ են, բայց կան մասնավոր դեպքեր, որոնց պետք է անդրադառնալ ամբիոնի վարիչների հետ հետագա հանդիպման ընթացքում:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշոցին՝

- Հաստատել բ.գ.թ., դոց. Հասմիկ Բաղդասարյանին որպես Ռումանական բանասիրության ամբիոնի հայցորդ Անի Արսենյանի գիտական ղեկավար:
- Երաշխավորել Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի շրջանավարտ Մերի Աղաբաբյանի թեկնածությունը ԵՊՀ ասպիրանտուրա ընդունվելու համար:
- Հաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ Կ. Քոչունցի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:
- Տպագրության երաշխավորել Ք. Հարությունյանի, Հ. Մկրտչյանի և Լ. Բագումյանի ուսումնական ձեռնարկը:
- Հաստատել Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հայցորդ Վիոլետա Հովհաննիսյանին որպես Արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ, վերահաստատել նրա թեկնածուականատենախոսության թեման նոր ձևակերպմամբ «ն գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ., դոց. Տիգրան Սիմյանին:
- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ Անահիտ Հակոբյանի թեկնածուականատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ., դոց. Նատալյա Գոնչար-Խանջյանին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

26 մայիսի 2015 թ.